ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՄՈՒՆՈԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.17-րդ կետերի դրույթներով

որոշում եմ՝

1. Հիմք ընդունելով մարզում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2011 թվականին անցկացված մոնիտորինգի արդյունքում հայտնաբերված թերությունները Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011թ. մայիսի 24-ի թիվ 49-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները.

1) <<Ծովագյուղի ԲԱ>> ՓԲԸ տնօրեն Կ. Գևորգյանին՝ քննարկել իմունոկանխարգելման գործընթացը իրականացնող բուժքույր Ժենյա Հակոբյանի աշխատանքում մնալու հարցը:

2) <<Կարմիրգյուղի ԲԱ>>, <<Նորատուսի ԲԱ>>, <<Ծակքարի ԱԱՊԿ>>, <<Ծովասարի ԱԱՊԿ>>, <<Ակունքի ԱԱՊԿ>>, <<Գեղամասարի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ների և <<Սևանի պոլիկլինիկա>> ՊՓԲԸ տնօրեններին՝ ուշադրության կենտրոնում պահել իմունոկանխարգելման գործընթացը, կարճ ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունները և տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ